սակաւապետութիւնը, լաւագոյն պարագային, յենւում է հազիւ 7–800 հազարի հասնող համայնավար կուսակցականների վրայ:

Ուրիշ խօսքով, եթէ ցարական ռէժիմը յենւում էր մի քանի հարիւր հազար տոհմային ազնուականների վրայ, Խորհրդայինն էլ յենւում է դրեթէ նոյնչափ թիւ կազմող արտօնեալ մի նոր դասակարգի, համայնավար կուսակցութեան վրայ: Փոխուել են անունները, մնացել՝ էութիւնը: Իսկ դա ոչ այլ ինչ է, եթէ ոչ դիքտատուրա, բռնապետութիւն,— ինչպէս կ'ուզէ թող անուանուի նա, ինչ անունով կ'ուզի թող գործածուի:

Եթէ այդ այդպէս է, եթէ մի ժողովրդի ճնշող մեծամասնութիւնը ապրում է չնչին փոքրամասնութեան բռնութեան տակ եւ կարող է ոչ ազատօրէն խօսիլ, ոչ էլ կազմակերպուիլ ու քաղաքական–տնտեսական գործունէութիւն ծաւալել, ապա ուրեմն նրա, այդ ժողովուրդի, կատարեալ իրաւունքն է՝ բոլոր հնարաւոր միջոցներով թօթափել իրենից բռնութեան լուծը եւ տիրանալ իր մարդկային եւ ազգային ազատութիւններին:

Ուրիշ խօսքով, յեղափոխութեան իրաւունքը բռնապետական կարգերում ապրող ամէն մի ժողովուրդի անկապտելի իրաւունքն է: Մի վարչակարգ, որ ընդունակ չէ եւ ոչ էլ պատրաստակամ՝ ընաշրջուելու եւ ճանաչելու ժողովուրդի հոծ մեծամասնութեան ազատ ապրելու իրաւունքը, վաղ թէ ուշ պիտի տապալուի նոյն այդ ժողովուրդի միահամուռ գրոհի առջեւ:

Ուրիշ վախճան չպիտի ունենայ հարկաւ նաեւ բոլշեւիկեան ռէժիմը, եթէ նա — ինչ որ շատ անհաւանական է — ներքուստ չբարեշրջուի: Ենթադրել թէ՝ դիքտատուրայի ռէժիմը յաւերժանայ պիտի Ռուսաստանում, թէ ռուս ժողովուրդը, որչափ եւ ինքնատ լինի նա այսօր, վաղ թէ ուշ չպիտի թօթափի իրենից բոլշեւիկեան լուծը, աւելի քան միամտութիւն է: Խօսք կարող է լինել միայն ժամանակի եւ պայմանների մասին: Որ ազատութիւնը վերջ ի վերջոյ այնուամենայնիւ ձեռք պիտի բերուի այս կամ այն ճանապարհով,— կասկածից դուրս է: Հայաստանը եւ հայ ժողովուրդն էլ, որոնք ապրում են քաղաքական նոյնպիսի պայմաններում, ինչ որ ռուս մեծ ժողովուրդը եւ առհասարակ Խորհ. Միութեան բոլոր ժողովուրդները, բնականաբար պիտի քայլի նոյն այդ ուղին, վերստին ստանալու համար իր ազատութիւնը:

VII

Հայաստանի եւ հայ ժողովուրդի համար բոլշեւիկեան դիքտատուրան առաւել եւս անհանդուրժելի է այն տեսակէտից, որ նա ծընունդ չէ մեր իրականութեան, այլ ներածուի վարչակարգ է:

Այսպէս կամ այնպէս, նա բուն Ռուսաստանում հետեւանք է ներքին պայքարների, քաղաքացիական կռիւների: Ցաղթական բոլշեւիզմը հաստատեց այնտեղ իր դիքտատուրան: Որչափ եւ ծանր է այդ լուծը, բայց ռուս ժողովուրդը ստիպուած է տանել նաեւ այն պատճառով, որ նա բաւականաչափ կորով հանդէս չբերաւ՝ անկարելի դարձնելու այն: Պարտուեց բռնատէր փոքրամասնութեան առաջ եւ հարկադրուած եղաւ ենթարկուել նրա թելադրած կարգերին:

Բոլշեւիկեան ռեժիմը Հայաստան մտցրուեց դրսից, կարմիր բանակի ձեռքով, այնպէս, ինչպէս որ հարիւր տարի առաջ ցարական ռէժիմն էր այնտեղ ներմուծուել ճերմակ բանակի ձեռքով: Սակայն կարմիր թէ ճերմակ ռուս, նա չէ դադարում մեզ համար օտար լինելուց: Եւ եթէ մի տարբերութիւն կայ նրանց մէջ, այդ էլ այն է որ, մինչ հարիւր տարի առաջ ռուս բանակը Այրարատեան Հայաստանը գրաւելով փոխարինեց դարձեալ մի օտար, պարսից բանակին, եւ որը, վերջինիս բաղդատութեամբ, ամէն տեսակէտից գերադասելի էր հայութեան համար եւ այդ պատճառով էլ ժամանակակից սերունդի կողմից (յիշեցէք «Վէրք Հայաստանին») մինչեւ իսկ ազատարար հռչակուեց, ռուս կարմիր բանակը, ընդհակառակը, Հայաստան մտնելով 1920–ին՝ բռնի ուժով վերցրեց հարազատ, ազգային իշխանութիւնը, տապալեց երկրի քաղաքական ինքնուրոյնութիւնը, այն փոխարինելով օտար իշխանութեամբ ու կարգերով:

Վերջապէս այսօր էլ լրջօրէն չեն կարող պնդել բոլշեւիկները, թէ Խորհ. ռէժիմը Հայաստանում՝ իսկապէս որ արդիւնք էր «բան-